ՓՈՔՐԵՐԻ ՀԱՄԱՐ

Ս. ՏԱՐՈՆՑԻ



891.99Մ
S-26

# ՀՈՊՈՊ

(Հեքյաթ)

ՊԵՏՀՐԱՏ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ. ԲԱԺԻՆ

ԵՐԵՎԱՆ 1938

~~91SEP2013~~
S-26
13336
Б С С Р
Дзяржбібліятэка
імя В. І. Леніна
№ 11.902
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍԽ- рм. ССР
Мясник
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
34206-62
Ф14964



Ф14964
2011-07

Մի ծույլ տղա կե լինում՝
Վոչ մի բանի չի գնում։

Մայրը, թե՝ յեկ, ա՛յ տղա, —
Ձեռք ու յերեսըդ լվա։

— Ձե՛, — լալիս է և ասում, —
Յես լվացվել չեմ ուզում։

Վողջ որը պարապ տալիս՝
Գյուղի մեջ ման է գալիս։

—Կեղտոտն յեկա՛վ, դեմն յեկեք,
Ասում եյին յերեխեք։

Թե փողոցում, թե բակում
Ծաղրում եյին, ծանակում։

Բայց եդ տղի հոգը չեր.
Նա իր գուռնան կփչեր։

—Չե՛, պնդում ե և ասում,—
Յես լվացվել չեմ ուզում։

Բայց մայրը շատ մաքուր եր,
Եդ բանը վո՛նց ընդուներ։

Մի մեծ պղինձ ե ճարում,
Յելնում Թոնիրը վառում։



Դրած ջուրը լիուլի,
Տես ինչպես է յեռ գալի։

Տղին մի կերպ քաշում տուն,
Նախատում է, խրատում։

Իսկ նա՝ լալիս է հոնգուր,
Ձեռք ու յերես՝ կեղտակուր։

—Ձե՜,— լալիս է և ասում,—
Յես լվացվել չեմ ուզում։

Բայց ազատում էլ չկար․
Հերիք չէր կեղտոտ մնար։

Փրփուր սապոն է տալիս,
Վոր գլուխը փայլփլի...



Ու յերբ սանրը վեր առնում,
Սապոնոտ մազերը սանրում՝

Հանկարծ սահում մոր ձեռքից—
Ու պո՜ւկ՝ փախչում ե մեկից։

—Հոպո՜պ դառնաս, չո՜ր տղա.
Ծույլ ու կեղտոտ յերեխա...

Այս ե ասում խեղճ մերը,
Մեկել նայում ե վերը,

Տղեն՝ թե սանր, թե սապոն
Առած՝ դառնում ե հոպոպ։

Հոպոպ դառնում, գլխակոր,
Ընկնում մենակ սար ու ձոր։





Ու մինչ էսօր, իր բնում,
Նա միշտ կեղտոտ է մնում։

Խմբագիր՝ Բաբկեն Կարապետյան
Նկարները և տեխ. խմբագրությունը Ան. Գասպարյանի
Սրբագրիչ՝ Ս. Փարսադանյան
Լիտոգրաֆիական աշխատանքը՝ Նիկողիմոսի

БССР
Дзяржбібліятэка
імя В. І. Леніна
№ 11.920

Գլավլիտի լիազոր՝ 4099 Հրատ. 4742.
Պատվեր 772. Տիրաժ 5000.

Պետհրատի 1 տպարան, Երևան, Լե

ՀՀ Ազգային գրադարան
NL0409279

47

13336

ԳԻՆԸ 40 ԿՈՊԵԿ

С. ТАРОНЦИ
УДОД

Гиз Арм. ССР, Ереван. 1938